Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

People
in Need

:Բուն

ԿԱՅՈՒՆ, ԱԶԴԵՑԻԿ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՔ)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՔՀԿ-ՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ(ՆԵՐ)Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպությունը, «Կայուն, ազդեցիկ և ներառական քաղհասարակություն» (ԿԱՆՔ) ծրագրի շրջանակում, հայտարարում է մրցույթ փորձագետ(ներ)ի ընտրության համար՝ աջակցելու նորաստեղծ և կայացած քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) և վերլուծական կենտրոններին՝ կազմակերպական կարողությունների գնահատման, զարգացման գործողությունների պլանների (DAP) մշակման գործընթացում:

1. Ծրագրի մասին

ԿԱՆՔ ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի և «Բուն» գիտամշակութային հիմնադրամի համագործակցությամբ:
36-ամսյա ծրագիրը, որը կտևի մինչև 2028թ. հոկտեմբեր, նպատակ ունի բարձրացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության դերը՝ որպես դիմակայուն, անկախ և վստահելի դերակատար ժողովրդավարական կառավարման, քաղաքականությունների ձևավորման և համայնքային զարգացման գործընթացներում:

Ծրագրի շրջանակում աջակցություն կստանա առնվազն 36 ՔՀԿ՝ կազմակերպական կարողությունների զարգացման և ինստիտուցիոնալ հզորացման միջոցով, ներառյալ սկզբնական և վերջնական գնահատումները:

2. Նպատակները

Առաջադրանքի նպատակն է աջակցել ՔՀԿ-ներին իրենց կազմակերպական կարողությունները գնահատելու և հզորացնելու հարցում՝ կառուցվածքային և մասնակցային գործընթացի միջոցով, որը ներառում է.

- Կազմակերպական կարողությունների ինքնագնահատում՝ Կազմակերպական կարողությունների գնահատման գործիքի (OCAT) միջոցով, որը հարմարեցված է զարգացման տարբեր փուլերում գտնվող կազմակերպություններին:
- Կազմակերպական զարգացման գործողությունների պլանների (DAP) մշակում կամ վերանայում՝ ըստ անհրաժեշտության՝ հիմնվելով գնահատման արդյունքների և կազմակերպությունների պատրաստվածության մակարդակի վրա:
- Աջակցել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ծրագրային թիմին համապատասխան թեմատիկ փորձագետների բացահայտման և ընտրության գործընթացում, ինչպես նաև նպաստել, որպեսզի OCAT գնահատումների արդյունքները, ՔՀԿ-ների բացահայտված կարիքները և DAP-երի առաջնահերթությունները ներառվեն սցենարային պլանավորման և սիմուլյացիոն ուսուցման գործընթացներում՝ հետագա ռազմավարական պլանավորման գործընթացներին աջակցելու նպատակով:
- Առաջընթացի չափում վերջնական OCAT գնահատումների միջոցով (նախատեսվում է 2028 թվականի օգոստոսին):

3. Աշխատանքի նկարագիրը

Փորձագետ(ներ)ը սերտորեն համագործակցելու է ընտրված ՔՀԿ-ների և «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ծրագրային թիմի հետ՝ 36 կազմակերպությունների կարողությունների զարգացման գործընթացն իրականացնելու նպատակով: Դրանք ներառում են 21 նորաստեղծ ՔՀԿ, 10 կայացած ՔՀԿ և 5 վերլուծական կենտրոն:

Փորձագետ(ներ)ը պետք է՝

- Մասնակցի մեկնարկային հանդիպմանը և պատրաստի աշխատարանների ու անհատական հանդիպումների օրակարգերն ու նյութերը:
- Իրականացնի սկզբնական OCAT գնահատումներ՝ առավելագույնը 5 խմբային առկա աշխատարանների միջոցով (21 նորաստեղծ/հիմնադիր ՔՀԿ-ների համար՝ յուրաքանչյուր խմբում 4–5 ՔՀԿ մասնակցությամբ) և 15 անհատական հանդիպումների միջոցով (10 կայացած ՔՀԿ-ների և 5 վերլուծական կենտրոնների համար): Յուրաքանչյուր աշխատարան կարող է տևել 1–2 օր, իսկ անհատական հանդիպումները նախատեսվում է անցկացնել մեկօրյա ձևաչափով:
- Աջակցի կազմակերպական զարգացման գործողությունների պլանների (DAP) մշակմանը կամ վերանայմանը՝ ըստ անհրաժեշտության՝ հիմնվելով բացահայտված կազմակերպական կարիքների և OCAT գնահատման արդյունքների վրա:
- Աջակցի «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ծրագրային թիմին՝ կարողությունների զարգացման կարիքների բացահայտման և համապատասխան աջակցման միջամտությունների ձևավորման հարցում:
- Աջակցի «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ծրագրային թիմին համապատասխան թեմատիկ փորձագետների բացահայտման և ընտրության գործընթացում,

ինչպես նաև նպաստի նրան, որպեսզի OCAT գնահատումների արդյունքները, ՔՀԿ-ների բացահայտված կարիքները և DAP-երի առաջնահերթությունները ներառվեն սցենարային պլանավորման և սիմուլյացիոն ուսուցման գործընթացներում՝ հետագա ռազմավարական պլանավորման գործընթացներին աջակցելու նպատակով:

- Ծրագրի ավարտական փուլում (2028 թվականին) իրականացնի վերջնական OCAT գնահատումներ (առցանց անհատական հանդիպումների ձևաչափով):
- PIN-ի կողմից տրամադրված ձևաչափերին համապատասխան պատրաստի և ներկայացնի հաշվետվություններ գնահատումների, աշխատարանների և ՔՀԿ-ների զարգացման արդյունքների վերաբերյալ:

4. Պարտականություններ

Նախապատրաստում

- Ծանոթանալ OCAT գործիքին և դրա կիրառման մեթոդաբանությանը:
- Ուսումնասիրել ընտրված ՔՀԿ-ների առանձնահատուկ կարիքներն ու համատեքստը՝ վերանայելով նրանց կողմից ներկայացված համապատասխան հավելվածները, օրինակ՝ առկա Ռազմավարական և/կամ Զարգացման պլանները, ինչպես նաև իրականացնել արագ գնահատում կամ մեկնարկային հանդիպում:
- Պատրաստել աշխատարանների ֆասիլիտացիայի համար անհրաժեշտ նյութերն ու գործիքները:

OCAT աշխատարանների վարում.

- Վարել մասնակցային աշխատարաններ և անհատական հանդիպումներ ՔՀԿ թիմերի հետ՝ նրանց կազմակերպական կարողությունների ինքնագնահատման նպատակով:
- Ապահովել, որ գնահատումն իրականացվի «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի OCAT գործիքի կառուցվածքին համապատասխան և ներառի հետևյալ ուղղությունները՝ կազմակերպության նպատակ և համատեքստ, ռազմավարություն, թիմային աշխատանք, շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցություն, հաշվետվողականություն, շահերի պաշտպանություն, հաղորդակցություն, ռեսուրսների մոբիլիզացում, ծրագրերի իրականացում և ներքին կառավարում:
- Գործընթացում ներառել գենդերազգայունություն, ներառականություն, իրավունքահեն մոտեցումներ և ռիսկերի մեղմացման սկզբունքներ՝ հատկապես անկայուն համատեքստում:

Կազմակերպական զարգացման գործողությունների պլանների (DAP) մշակում

- Ըստ անհրաժեշտության՝ ուղղորդել ՔՀԿ-ներին իրենց կարողությունների զարգացման առաջնահերթությունները, հիմնական փուլերը, ժամկետները, անհրաժեշտ ռեսուրսները և պատասխանատու անձանց սահմանելու գործընթացում: Փաստաթղթի ձևաչափը կտրամադրվի «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից:

Սցենարային պլանավորում և սիմուլյացիոն ուսուցում

- Աջակցել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ծրագրային թիմին սցենարային պլանավորման և սիմուլյացիոն գործողությունների համար համապատասխան թեմատիկ փորձագետների բացահայտման և ընտրության գործընթացում:

**Սցենարային պլանավորման մեթոդաբանությունները և սիմուլյացիոն վարժությունները կմշակվեն և կիրականացվեն առանձին ծրագրային գործողությունների շրջանակում ներգրավված թեմատիկ փորձագետների կողմից:*

Վերջնական OCAT գնահատումներ

- Ծրագրի ավարտին ՔՀԿ-ների հետ անցկացնել անհատական առցանց հանդիպումներ՝ ձեռք բերված արդյունքները և գնահատականների փոփոխությունները գնահատելու նպատակով, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություն «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից տրամադրված ձևանմուշի հիման վրա:
- Փաստաթղթավորել արդյունքները հիմնավորող ապացույցները:

5. Արդյունքներ / Ներկայացվելիք փաստաթղթեր՝

Փորձագետ(ներ)ը պետք է ներկայացնի՝

- Սկզբնական OCAT գնահատման հաշվետվություններ բոլոր մասնակից ՔՀԿ-ների համար:
- Կազմակերպական զարգացման գործողությունների պլաններ DAP-եր:
- Ամփոփ հաշվետվություն (անգլերեն լեզվով) և առաջարկություններ սցենարային և սիմուլյացիոն մեթոդների վրա հիմնված կարողությունների զարգացման միջամտությունների վերաբերյալ:
- Վերջնական OCAT գնահատման հաշվետվություն (անգլերեն լեզվով)՝ ներառյալ մեթոդաբանությունը, հիմնական բացահայտումները և առաջարկությունները:

6. Նախնական ժամանակացույց

Հանձնարարությունը կիրականացվի հետևյալ նախնական ժամանակացույցով.

- Սկզբնական OCAT գնահատումներ, DAP-երի մշակում – 2026 թվականի հունիս–սեպտեմբեր:
- Վերջնական OCAT գնահատում – 2028 թվականի օգոստոս:

7. Որակավորումներ և փորձ

- Առնվազն 3 տարվա փորձ կազմակերպական զարգացման, ՔՀԿ-ների կարողությունների գնահատման, մասնակցային ռազմավարական

պլանավորման և կարողությունների զարգացման գործողությունների պլանավորման ոլորտներում:

- Մասնակցային խմբային գործընթացների ֆասիլիտացիայի նշանակալի փորձ՝ համագործակցային քննարկումներ վարելու, խմբային դինամիկան կառավարելու և մասնակիցներին համատեղ վերլուծությունների, լուծումների և որոշումների մշակման գործընթացում աջակցելու կարողությամբ՝ ավանդական դասընթացավարակենտրոն մոտեցումներից դուրս:
- Ինտերակտիվ առցանց աշխատաժողովների և գործողությունների ֆասիլիտացիայի փորձ, ինչպես նաև առցանց ուսուցման, համագործակցության և ներգրավվածության առանձնահատկությունների լավ ընկալում:
- Նորաստեղծ/համայնքահեն կազմակերպությունների մարտահրավերների ընկալում:
- Կայացած կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների մարտահրավերների ընկալում:
- Հայերեն և անգլերեն լեզուներով գերազանց գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ:
- Տարբեր քաղաքացիական հասարակության դերակատարների հետ հարմարեցված և հզորացնող մոտեցումներով աշխատելու պատրաստակամություն՝ հարգելով նրանց անհատական ընտրություններն ու զարգացման ուղին:

8. Դիմելու գործընթացը

Հետաքրքրված թեկնածուները պետք է հետևյալ փաստաթղթերն ուղարկեն՝ **procurement.armenia@peopleinneed.net**

- **Մոտիվացիոն նամակ**. որը ներկայացնում է դիմորդի հետաքրքրվածությունը տվյալ դերով և հիմնավորում է նրա համապատասխանությունը առաջադրանքի պահանջներին: Նամակը պետք է ներառի նաև դիմորդի մեթոդաբանական մոտեցումը, կազմակերպական զարգացման վերաբերյալ ընկալումը, նորաստեղծ/համայնքահեն և կայացած ՔՀԿ-ների համատեքստերի ըմբռնումը, ինչպես նաև ինտերակտիվ առցանց աշխատաժողովների և գործունեությունների ֆասիլիտացիայի փորձը:
- **Ինքնակենսագրություն (CV**). մանրամասն CV՝ ներառյալ դիմողի աշխատանքին ծանոթ առնվազն երկու անձի կամ կազմակերպության կոնտակտային տվյալներ:
- **Աշխատանքային ծանրաբեռնվածության գնահատում**. դիմորդը պետք է ներկայացնի յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ օրերի իր գնահատականը՝ հիմնվելով փորձի վրա, ինչպես նաև համառոտ մեթոդաբանական մոտեցում OCAT գործընթացի ֆասիլիտացիայի և տարբեր ՔՀԿ-ների հետ մասնակցային կազմակերպական վերլուծության աջակցության վերաբերյալ:

- **Գնային առաջարկ.** դիմորդը պետք է ներկայացնի ճկուն ֆինանսական առաջարկ՝նշելով միավորի արժեքները (օրինակ՝ մեկ ՔՀԿ-ի, մեկ աշխատարանի կամ մեկ արդյունքի համար), քանի որ աշխատանքի վերջնական ծավալը կարող է փոփոխվել՝ OCAT գնահատման փուլում բացահայտված կարիքներից ելնելով:

  Իրավաբանական անձանց/ընկերությունների դեպքում բյուջեն պետք է ներկայացվի առանց ԱԱՀ-ի, իսկ անհատ խորհրդատուների դեպքում՝ զուտ (NET) գումարով:

  Ֆինանսական առաջարկը պետք է ներառի բոլոր հարակից ծախսերը, ինչպես նաև հստակ նշում, թե արդյոք առաջարկվող արժեքը ներառում է ճանապարհածախս, հաղորդակցության կամ այլ հարակից ծախսեր (եթե կիրառելի է), ինչպես նաև կեցության ծախսեր՝ ըստ անհրաժեշտության: Քանի որ մասնակից ՔՀԿ-ները գտնվում են Հայաստանի տարբեր մարզերում, հանձնարարությունը կարող է ներառել ճանապարհորդություններ՝ առկա անհատական հանդիպումների անցկացման նպատակով: Հանդիպումների ճշգրիտ վայրերն ու ժամանակացույցը կտրամադրվեն իրականացման փուլում: Վճարումները կիրականացվեն հաստատված արդյունքների և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի ներկայացման հիման վրա:

- **Հասանելիություն**. դիմողի հասանելիության կոնկրետ ժամկետները 2026 թվականի հունիս–սեպտեմբեր և 2028 թվականի օգոստոս ամիսներին:

  Աջակցող նյութեր. Դիմորդները կարող են կցել կամ տրամադրել հղումներ համապատասխան թեմաներով իրենց հոդվածներին, բլոգային գրառումներին կամ այլ հրապարակված նյութերին՝ հայտը հիմնավորելու նպատակով:

Իրավաբանական անձանց դիմումների դեպքում անհրաժեշտ է նաև ներկայացնել՝

- Կազմակերպության/ընկերության նկարագիր:
- Առաջադրվող փորձագետ(ներ)ի պրոֆիլներ՝ ներառյալ CV-ները, մոտիվացիոն նամակները, հասանելիությունը և համապատասխան հրապարակված նյութերը:

9. Գնահատման և ընտրության գործընթաց

Գնահատումն իրականացվելու է հետևյալ համամասնությամբ՝ Տեխնիկական գնահատականը կազմում է 60%, իսկ Ֆինանսական գնահատականը՝ 40%:

Գնահատման չափանիշներ	**Առավելագույն միավոր**
Առնվազն 3 տարվա փորձ ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ոլորտում (CV և մոտիվացիոն նամակ)	5
Կազմակերպական զարգացման և ՔՀԿ համատեքստերի լավ ընկալում (CV և մոտիվացիոն նամակ)	5
Առաջարկվող մեթոդաբանական մոտեցում	5
Ինտերակտիվ առցանց աշխատարանների և գործունեությունների ֆասիլիտացիայի փորձ, ինչպես նաև առցանց ուսուցման, համագործակցության և ներգրավվածության առանձնահատկությունների լավ ընկալում (CV և մոտիվացիոն նամակ)	5
ՔՀԿ համատեքստերի, այդ թվում՝ նորաստեղծ/համայնքահեն, կայացած կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների առանձնահատկությունների ընկալում (մոտիվացիոն նամակ)	5
Ներկայացված և համապատասխան երաշխավորագրեր/հղումներ	5
Ընդնահուր	**30**

10. Դիմելու կարգը

Դիմումների փաթեթները պետք է ներկայացվեն էլեկտրոնային տարբերակով՝ **procurement.armenia@peopleinneed.net**

Էլ. նամակի թեմայի դաշտում նշել՝

«Facilitator-Sustainable, Impactful and Inclusive Civil Society»
Դիմումների ներկայացման վերջնաժամկետ՝ **հունիսի 10, 2026թ., ժամը 23:00:**

Միայն նախնական ընտրությունն անցած թեկնածուների հետ կապ կհաստատվի և նրանք կհրավիրվեն հարցազրույցի: